ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՅՑ

BEARR

2020
www.ngoc.am

ngo center

Հետազոտությունն իրականացվել է «Կանայք հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում: «Կանայք հանուն լավ կառավարման» ծրագիրն իրականացվում է ՀԿ Կենտրոնի կողմից: Ծրագիրը ֆինանսավորվում է The BEARR Trust փոքր դրամաշնորհների շրջանակներում:

Հետազոտությունն իրականացրել են Մեծ Պարնի համայնքի երիտասարդական նախաձեռնող խմբի կողմից:

Հետազոտության նպատակն է պարզել Մեծ Պարնի համայնքի առավել կարևոր հիմնախնդիրները, բնակչության մոտեցումը լուծում պահանջող հիմնախնդիրների առաջնահերթություններին, տարբերակել այդ առաջնահերթությունները կախված սեռից և տարիքից, չափել տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության մակարդակը:

Հետազոտությունն իրականացվել է 18 տարեկանից բարձր բնակչության շրջանում, հարցաթերթի հիման վրա՝ դեմ առ դեմ հարցման միջոցով:

Աշխատանքային խումբ՝
Աշխատանքները համակարգող՝ Վահե Խաչիկյան
Վերլուծություն պատրաստողներ՝ Հասմիկ Ասատրյան, Լիլիթ Պալյան
Հարցազրուցավարներ՝ Հասմիկ Ասատրյան, Լիլիթ Պալյան, Սուսաննա Դավթյան, Սարգիս Փիլոյան, Վարդգես Պապոյան, Անի Ջոթյան, Լամարա Ավետիսյան, Մարիամ Քոսյան

Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է քանակական մեթոդաբանությամբ: Որպես քանակական մեթոդ իրականացվել է դեմ առ դեմ հարցում Մեծ Պարնի համայնքի 18 տարեկանից բարձր իգական և արական սեռի ներկայացուցիչների շրջանում:

- Ընտրանքային համախմբությունը՝ 169 հարցվող
- Անկեղծության մակարդակ՝ 95%
- Ընտրանքի սխալ՝ 7,26%
- Բնակչությանը՝ 2160

Ժողովրդագրական բաժին

Ընտրանքի փաստացի ծավալը կազմել է 169 ռեսպոնդենտ: Տարածական առումով ընտրանքը ներառել է ողջ Մեծ Պարնի համայքնը: Հարցվողների շրջանում առավել մեծ թիվ են կազմել կանայք 69%-ը, իսկ տղամարդիկ հարցողների 31%-ն են:





Հարցված քաղաքացիների 24%-ը կազմել են 18-25 տարեկանները, 24%-ը՝ 26-35, 21%-ը՝ 36-45, իսկ 31%-ը՝ 46 և ավելի: Այսպիսով կարող ենք արձանագրել, որ հարցմանը մասնակցել են բոլոր տարիքային շրջանակներից գրեթե հավասարապես, սակայն նկատում ենք, որ 46 և ավելի տարիքայիններն ավելի շատ են ներկայացված:



Իգական սեռի ներկայացուցիչների 23%-ն ունեն բարձրագույն կրթություն, 29%-ը՝ միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն կրթություն, իսկ 48%-ը միջնակարգ կրթություն:
Արական սեռի ներկայացուցիչների 32%-ը ունեն բարձրագույն կրթություն, 18%-ը՝ միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն կրթություն, 50%-ը՝ միջնակարգ կրթություն:
Այսպիսով կարող ենք փաստել, որ հարցված տղամարդկանց և կանանց հարաբերությամբ տղամարդիկ Մեծ Պարնիում ավելի շատ ունեն բարձրագույն կրթություն, իսկ ահա միջին մասնագիտական կրթության մասով առավել բարձր դիրքերում են գտնվում կանայք:



Հարցվողներից 58-ը զբաղվում են տնային տնտեսությամբ, 36-ը անասնապահությամբ և հողագործությամբ, 34-ը պետական աշխատող են, 31-ը զբաղվում են հողագործությամբ, 23-ը թոշակառու են, 18-ը՝ ուսանող, 12-ը՝ ինքնազբաղված, 9-ը՝ գործազուրկ, 8-ը՝ արտագնա սեզոնային աշխատող, 6-ը զբաղվում են անասնապահությամբ։

Մեծ Պարնի համայնքում փաստացի չկա հանրային գրադարան, թանգարան, արվեստի դպրոց և մշակույթի տուն, չնայած դրան՝ գործում են Turn The Page գրադարանը, պարի և նկարչության խմբակներ: Հարցվածների 42%-ը՝ բավարար, 29%-ը՝ լավ և 20%-ը անբավարար է գնահատել դպրոցի աշխատանքը: 54%-ը՝ գերազանց, 36%-ը՝ լավ և 10%-ը բավարար է գնահատել մանկապարտեզի աշխատանքը: 37%-ը՝ լավ, 35%-ը՝բավարար և 18%-ը անբավարար են գնահատում ամբուլատորիայի աշխատանքը: 38%-ը՝ լավ, նույնքանը՝ բավարար, 10%-ը՝ գերազանց և 9%-ը անբավարար են գնահատում սպորտային խմբակների աշխատանքը: 72%-ը՝ գերազանց և 23%-ը լավ են գնահատում երիտասարդական կենտրոնի աշխատանքը:

	ենթակառուցվածք	գերազանց	լավ	բավարար	անբավարար	Չունենք
2.01	դպրոց	15	49	71	34	
2.02	մանկապարտեզ	91	61	16	1	
2.03	արվեստի դպրոց		3	2	4	160
2.04	հանրային գրադարան		4	5	4	156
2.05	թանգարան		2	2	5	160
2.06	ամբուլատորիա	14	63	59	30	3
2.09	մշակույթի տուն		2	2	8	157
2.10	սպորտային խմբակներ	17	65	64	15	8
2.11	Երիտասարդական կենտրոն	121	39	5	2	2

Հարցվածների կեսը խնդիրներ չեն տեսնում մանկապարտեզի աշխատանքում, 15%-ը ծանոթ չեն կառույցի աշխատանքին, 9%-ը բողոքում են սանիտարահիգիենիկ վիճակից, 8%-ը՝ գույքի և խաղալիքների վատ որակից, 8%-ը՝ դաստիարակ-ծնող հարաբերություններից, 3%-ը՝ ուսումնական պրոցեսի ոչ լիարժեք կազմակերպումից:



Ըստ հարցման արդյունքների Մեծ Պարնի համայնքում գյուղատնտեսության առաջնային խնդիրներն են՝ գյուղմթերքի ցածր գներն ու իրացման խնդիրը, մթերման կետ չունենալը եւ որակյալ սերմերի բացակայությունը: Հարցվողները նշում են նաեւ բյուջեի պակասորդը, մասնագիտական տեղեկատվության պակասն ու ժամանակակից ագրոհամակարգերի բացակայությունը:



Ըստ հարցման արդյունքների՝ համայնքում անասնապահության առաջնային խնդիրներն են գյուղմթերքի ցածր գինն ու իրացումը, արոտավայրերի ցածր որակը: Հարցողները նշում են նաև անասունների չապահովագրված լինելու, անասնագոմերի անմխիթար վիճակի մասին:



Երիտասարդների գործազրկությունը, դրանից բխող ֆինանսական բարդ կացությունը, արտագաղթը, ինչպես նաև ազատ ժամանցն անցկացնելու ընտրության բացակայությունն ու կրթության/ինքնազարգացման հնարավորությունների սահմանափակությունը հարցվողները համարում են երիտասարդության առաջնային խնդիրներ համայնքում:



Հարցվողները ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց առաջնային խնդիրներ են համարում գործազրկությունը, ֆինանսական բարդ կացությունը: Կանանց դեպքում առաջնային խնդիր է նաեւ ազատ ժամանցն անցկացնելու ընտրության բացակայությունը, տղամարդկանց դեպքում՝ արտագաղթը: Կանանց դեպքում կրթության/ինքնազարգացման հնարավորությունների սահմանափակությունը, ինքնարտահայտման հնարավորությունների պակասը եւ կանանց նկատմամբ խտրականությունը գերազանցում է տղամարդկանց դեպքերին:





Աշխատատեղերի բացակայությունը, արտագաղթը, գյուղատնտեսության ոչ եկամտաբեր լինելը եւ երիտասարդների համար զբաղվածության/ժամանցի վայրերի բացակայությունը հարցվածները համարում են գյուղի առաջնային խնդիրները։



Տղամարդկան 58%-ը և կանանց միայն 29%-ն է նշում, որ մասնակցում է համայնքում տեղի ունեցող իրադարձություններին:



Հարցվածները համայնքում կատարվող իրադարձությունների մասին տեղեկացվելու հիմնական միջոցներ են համարում ընկերներին, ընտանիքին, սոց. ցանցերը, էլ. փոստը և կայքերը:



Տղամարդկանց 40%-ը եւ կանանց ընդամենը 26%-ն է դիմել ՏԻՄ-ին՝ ներկայացնելով որևէ պահանջ կամ առաջարկություն։



ՏԻՄ-ին դիմողների 84%-ը իր պահանջը/առաջարկությունը ներկայացրել է բանավոր և միայն 12%-ն է իր պահանջ/առաջարկությունը ներկայացրել գրավոր, իսկ 2%-ական տոկոսը դա արել է կամ ավագանու միջոցով, կամ առաջարկությունը գցել է համայնքապետարանի առաջարկությունների արկղը։



Դիմողների միայն 55%-ի պահանջին/առաջակությանն է ընթացք տրվել, իսկ պահանջ/առաջարկություն ներկայացրածներից 27%-ը նշում են, որ դժվարանում են հարցին պատասխանել։



Երբեւէ ՏԻՄ-ին չդիմած տղամարդկանց 74% և կանանց 72%-ը նշում են, որ դիմելու անհրաժեշտություն չի եղել, թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց 23%-ը կարծել է, որ իր առաջարկությունը չի ընդունվի, իսկ տղամարդկանց 3%-ը, իսկ կանանց 5%-ը չի իմացել, որ կարող է դիմել:



Տղամարդկանց 40%-ը նշել է, որ ճանաչում է ավագանու բոլոր անդամներին, մինչդեռ կանանց դեպքում այդ ցուցանիշը կազմում է 15%:



Համայնքում կա մեկ կին ավագանի եւ բնակչության միայն 38%-ը գիտի այդ մասին: Հարցին, թե քանի կին ավանգանու անդամ կա Մեծ Պարնի համայնքում 26%-ը նշել է սխալ, իսկ 36%-ը՝ չգիտի:



Հարցված տղամարդկանց ընդամենը 17%-ը եւ կանանց ընդամենը 7%-ն են մասնակցել ավագանու նիստերին։



Հարցված տղամարդկանց 30%-ը եւ կանանց 18%-ը տեղյակ չեն եղել, որ կարող է մասնակցել ավագանու նիստերին, տղամարդկանց 16% և կանանց 15%-ը իրազեկված չեն եղել նիստի օրվա/տեղի/ժամի մասին, տղամարդկանց 26 և կանանց 36%-ը ցանկություն չեն ունեցել մասնակցելու ավագանու նիստին եւ տղամարդկանց 21%-ի ու կանանց 27%-ի դեպքում մասնակցելու անհրաժեշտություն չի եղել։



Ըստ հարցվածների համայնքի կառավարման առաջնային խնդիրներն են՝ բնակիչների անտարբերությունը համայնքի խնդիրներին, անիրազեկվածությունը ավագանու նիստերին իրենց մասնակցության իրավունքի մասին եւ ավագանու կազմում երիտասարդների սակավ ներգրավվածությունը։



Հարցվողները որպես իրենց նշած խնդիրների լուծում տեսնում են համայնքի բնակիչների համախմբվածությունը, նրանց իրազեկվածության մակարդակի բարձրացումը եւ կանանց առավել ներգրավվածությունը:



Կանանց 72%-ը եւ տղամարդկանց 62%-ը կարծում է, որ կանանց առավել ներգրավվածությունը կարող է նպաստել համայնքի առջեւ ծառացած խնդիրների լուծմանը:



Կանանց 37%-ը եւ տղամարդկանց 28%-ը կարծում են, որ կանայք կազմակերպված են, կանանց 26%-ը եւ եւ տղամարդկանց 15%-ը համարում են, որ կանայք կազմակերպված են: Տղամարդկանց 11%-ը եւ կանանց ընդամենը 9%-ը կարծում է, որ կանայք խելացի են, տղամարդկանց 37%-ը եւ կանանց ընդամենը 25%-ը կարծում է, որ կանայք նախաձեռնող են: Տղամարդկանց 9%-ը եւ կանանց ընդամենը 3%-ը կանանց վերագրում են նշված բոլոր հատկանիշները:



Կանանց պասիվ մասնակցության պատճառը համարում են զբաղվածությունը՝ կանանց 35%-ը եւ տղամարդկանց 23%-ը, հանրային կարծիքը՝ կանանց 40%-ը եւ տղամարդկանց 37%-ը: Տղամարդկանց 25%-ը կարծում է, որ կանայք ցանկություն չունեն ակտիվ մասնակցության, սակայն կանանց ընդամենը 7%-ն է այդպես կարծում:



Մեծ Պարնի համայնքում կանանց 78%-ը եւ տղամարդկանց 62%-ը պատրաստ է ընտրել համայնքի կին ղեկավար:



Համայնքի կին ղեկավար չընտրողները համարում են, որ կանանց ձայնը լսելի չէ, ընտանեկան զբաղվածությունը թույլ չի տա եւ դա կնոջ գործը չէ:



Հարցվածների 47%-ը խոչընդոտ է համարում ոչ բավաչար բյուջեն, իսկ 25%-ը կարծում է, որ խնդիրը համապետական է:



Հարցվածների 71%-ը պատրաստ է կատարել նյութական/ֆինանսական եւ 83%-ը՝ ֆիզիկական/տեխնիկական ներդրում համայքնի զարգացմանը նպաստելու համար:

	Նյութական/ֆինանսական	Ֆիզիկական/տեխնիկական
այո	120	141
ոչ	49	28

Տղամարդկանց 77%-ը եւ կանանց 50%-ը համարում է, որ կատարել է որեւէ դրական քայլ համայնքի զարտացմանը նպաստելու գործում:



Եզրակացություններ

1. Մեծ Պարնի համայնքում համայնքային ենակառուցվածքները հիմանակնում գտնվում են լավ կամ բավարար վիճակում և կատարում են իրենց հիմնական գործառույթները: Մանկապարտեզը գտնվում է գերազանց վիճակում, սակայն մշակույթի տունը, արվեստի դպրոցը պարզապես բացակայում են:

2. Գյուղատնտեսության վերբերյալ խնդիրները համայնքի բնակիչները կապում են ցածր գների (գնագոյացման), իրացման խնդրի, անբավարար ռեսուրսների հետ:

3. Մեծ Պարնի համայնքում բնակչության մեծամասնությունը համայնքում տեղի ունեցող միջոցառումներին չի մասնակցում, իրազեկված չէ ավագանու նիստերին մասնակցելու իր իրավունքից, հազվադեպ է դիմում ՏԻՄին որևէ պահանջով կամ առաջարկությամբ:

4. Կանանց մասնակցության առումով բնակիչներն ունեն որոշ կարծրատիպային մոտեցումներ, սակայն կան նաև դրական ցուցանիշներ՝ հարցվածների մեծամասնությունը պատրաստ է ընտրել համայնքի կին ղեկավար և կարծում է, որ կանանց ակտիվ մասնակցությունը կարող է նպաստել համայնքի առջև ծառացած խնդիրների լուծմանը:

Առաջարկություններ

1. Մեծ Պառնի համայնքի 2021թ-ի ՏԱՊ-ի մշակման գործընթացում բնակչության տարբեր սեռերի, տարբեր տարիքային և սոցիալական խմբերի մոտեցումների վերհանում և ներառում համայնքում իրականացվելիք ծրագրերում:

2. ՏԱՊ-ում ներկայացնել համայնքի բնակչության մեջ տարիքային, սոցիալական անապահովության, հաշմանդամության, աշխատողների, թոշակառուների խմբերի գենդերային բաշխվածությունը:

3. «Համայնքի երիտասարդական ավագանու» ձևավորում:

4. «Սուրճի բաժակ» կանանց ակումբի ստեղծում:

5. Համայնքապետարանի աշխատակիցներից մեկին ուղարկել վերապատրաստման՝ իրազեկման աշխատանքների որակը բարելավելու նպատակով: